



ՏՆՕՐԷՆ ԽՄԱԳԻՐ  
ԵՒ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ  
ՆԻՒ Մ. ԹԻՒՂԵՆՏՅԱՆ

# Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ԹԵՐԹԸ 20 ՓՐ. ԱՐԾԱԹ

ՐԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուկրաինա

Կ. Պոլսոյ համար

Տարեկան	դր. 100
Վեցամսեայ	» 50
Եռամսեայ	» 25

Գաւառաց համար

Տարեկան	դր. 150
Վեցամսեայ	» 75
Եռամսեայ	» 40

Օտար երկիր տրկն. 40 Յր.ք.

## Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՀՐԱՒԻՐ

ԱՌ. Ա. Չ. Գ. ԵՐԵՎԱՆԻ

Ազգային ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ օգոստ. 24 ի Ղալաթիա. Ատեանը պիտի բացուի ճիշդ ժամը ճին և գոցուի 10ին:

Հրահրեալ են երեսփոխան էֆէնտինները՝ իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ:

1879 օգոստ. 20

Ներսէս Պարթ. Կ. Պոլսոյ  
ՕՐԱՆԱՅՐԳ.

1. Խնդիր ազգ. ուղղակի արոյց. — Շարունակութիւն վիճաբանութեան ի վերայ Համարակալութեան գիււանի տեղեկագրոյն:

2. Խնդիր վերաքննիչ Սահմանադրութեան. — վիճարանութիւն ի վերայ նախաձեռն. գիււանի տեղեկագրոյն:

3. Խնդիր Ղալաթիոյ թագեցւոց վիճաբանութիւն ի վերայ տեղեկագրոյ Մայր գիււանի:

Օտեան էֆ. ի. Բնդ. Ժողովոյ վերջին նիստին մէջ, ըրած յայտարարութեանը անպատեհ և քննադատելի կետերէն մէկն ալ է՝ Ս. Պատրիարքին արարքը քննադատող ազգ. լրագրաց մասին ըրած ակնարկութեամբը՝ ըսելը թէ՛ ինքը այդ թերթը կամ թերթերը չկարդար:

Օտեան էֆ. թէպէտ չըսեր թէ՛ ազգ. թերթերն ինչո՞ւ համար չկարդար, այդ թերթերն ինքն իրեն բաժանորդ չըլլալով չտանալուն համար, թէ այդ լրագրաց բաժին կամ գրածին կարեւորութիւն մը չտալուն համար, և կամ թէ զանոնք կարդալու ժամանակ չունենալուն համար է որ չկարդար, բայց ինչ որ ալ լինի՝ այդպիսի յայտարարութիւն մը, այսինքն «այդ թերթերն ես չեմ կարդար» խօսքը ներքի չէ արտասանուիլ Օտեան էֆ. ի բերնէն:

Ինչո՞ւ համար:

Այդ ինչո՞ւն ըսենք:

Օտեան էֆ. իրեն Հարկց. շինութեանց պաշտօնէութեան խորհրդական և կամ իրեն ստակական անհատ՝ ազատ է ուզած թերթը կամ գիրքը կարդալ կամ չկարդալ, և կամ իրեն հաճոյ թուած կերպիւր ժամանակը անցնել, իսկ իրեն ազգ. երեսփոխան ընաւ ներքի չէ իրեն չկարդալ ազգ. թերթերուն գոնէ այն մասերն՝ որք օտար թերթերէ փոխ չառնուելով, նոյն թերթին յայտնած խմբագրական կարծիքը, տեսութիւնքը և կամ իր մասնաւոր ազդիւններէն քաղած տեղեկութիւններն կ'պարունակեն:

Մեր ազգին թերթերն՝ արդարեւ Անգղիացոց Թայմսը, Մորնինկ-Ռօսթը, Սթէնտարտը, և կամ Գաղղիացոց Թանը, Բէրլինայի քրիստոնէսը և Տէպան չեն, բայց մեր ազգին համար ալ փոքր ի շատէ կարեւորութիւն ունեցող թերթեր են, ինչպէս որ կրէնվիլ մը, կլաւքսթըն մը, ինչպէս որ Տիֆլիզի մը, Լա Ռօշֆուք մը, իւրաքանչիւրն իր ազդին և օտարազդի (ոչ թէ մէկ թերթը) ալ թերթերը կարդալու պարտականութիւն մ'ունեցած կ'զգայինք ինքնքր, նոյնպէս ալ մեր մէջ Օտեան մը, Սերվիլէն մը, Ասլանիան մը, Աղաբէկեան մը պարտաւոր են մեր ազգ. թերթերն կարդալու, որոնք ազգին քաղաքային և իմացական վիճակին հայելիներն են, և ազգին առօրեայ վիճակն ու կացութիւնը արձանագրելու կ'ձառայեն:

Ազգին վիճակը, թէ՛ մտաւոր և թէ՛ քաղաքային, ազգ. թերթերու ընթերցումէն միայն կարելի է քաղել և իմանալ, Օտեան էֆ. որ ազգին երեսփոխանն է և ազգին վիճակին վերայ մանրամասն համարութիւն ու նենալու պարտականութիւն մը

ալ կ'կրէ, կ'փափարէ ինք գիտնալ թէ՛ ուրկէ՞ կ'քաղէ արդեօք իր այդ տեղեկութիւնները, իրեն համար մասնաւոր ազդիւնն՝ կամ թղթակիցներուն իրարեօք, ի վան, ի կարին ի Մուշ և այլուր, թէ ոչ՝ մեր ազգին վիճակը եւրոպական օտար թերթեր կարդալով՝ անոնցմէ կ'տեղեկանայ, եւ ամօթ չէ՞ միթէ Օտեան էֆ. ի, երբ երեսփոխանին մէջը ելնէ որ մը խորհրդարանին մէջ ազգ. թերթի մը հրատարակած մէկ իրողութիւնն յառաջ բերած ատեն, Օտեան էֆ. ըսելու ըլլայ թէ՛ «ինքը չէ կարդացած գայդ», Լուսած է երբէք ուրիշ երկիրներու մէջ, ոչ թէ պարզ երեսփոխան մը, այլ պաշտօնեայ մ'անդամ, որ ըսած ըլլայ թէ՛ «ես այդ ինչ թերթը չկարդացի», այլ կրնան թէ «այս ինչ թերթին հրատարակած այն ինչ լրոյն վրայօք՝ կառավարութիւնը դեռ տեղեկութիւն մը չունի» ևն, բայց ոչ երբէք թէ «ես այդ թերթին դրածը չը տեսայ»:

Մեր Նօրթ քօթի կամ Յէրբի՛ ըսելն ամօթ համարած խօսքը Օտեան էֆ. եթէ ըսելու ըլլայ, ամօթ չէ՞ միթէ իրեն այդ խօսքը, Մինչև իսկ Օտեան էֆ. եթէ ազգ. լրագրութիւն կարդալու փափաք և ախորժ մ'ալ չունենայ, դարձեալ ակնածելու էր հրապարակաւ այդպիսի յայտարարութիւն մ'ընելէ, «ըստ էֆ. ի ունի ք... զի այն ատեն իրաւունք տուած կ'ըլլայ հասարակաց կարծեաց, ըսել Օտեան էֆ. ի համար թէ, ինչին երեսփոխանն է սա, որ ազգ. թերթ չկարդար եղեր, և ազգ. թերթ չկարդացող երեսփոխանէ մը ազգը ինչ օգուտ կրնայ սպասել:

— Բայց թերթ կարդալէն երեսփոխան մ'ի՞նչ օգուտ պիտի քաղէ» պիտի հարցնէ թերես Օտեան էֆ. ի:

— Այն օգուտը կ'քաղէ՛ ինչ որ կ'քաղեն միւս երեսփոխանք որոց ամենէն չհաւնուածը, օրինակի համար ֆրիստոստուր էֆ. առնուազն օրը 3-4 ազգ. թերթ կ'կարդայ, չգիտեմք սակայն թէ բաժանորդ է ամենուն ալ կամ ոչ, բայց գիտեմք և կ'տեսնեմք որ կ'կարդայ, և այս թերթերը կարդալուն շնորհիւն է որ այդ մարդը Օտեան էֆ. ի գովեստիցը արժանացաւ թէ ազգին ալ բաւական ծառայութիւններ բերէ նա, և եթէ իրօք ըրեր է այդ ծառայութիւնները՝ այդ ազգ. թերթերը անվրէպ կարդալուն շնորհիւն է որ ըրեր է, և զորս չսխալ կրնար ընել՝ եթէ նա ալ Օտեան էֆ. ի պէս ազգ. թերթերն կարդալը խոտած կամ անդունած ըլլար:

Եւ միթէ չենք տեսներ ամեն օր եւրոպ. խորհրդարանաց մէջ երեսփոխաններ, որոնք սակամ նա թերթին տուած տեղեկութեանը վրայ հարցումներ կ'ընեն կառավարութեան և բացառութիւններ կ'պահանջեն, և այս բանն ընելով ալ իրենց երեսփոխանական պարտականութիւնը կատարած կ'համարին զիրենք, երբ թերթ կարդացած չըլլային՝ իրենց այդ պարտականութիւնը չպիտի ճկրնային կատարել, իրեն զՕտեան էֆ. և հետեւաբար պարտազանց պիտի գտնուէին:

Այս ամօթ ի փոքրիկ օրինակ մը խորհրդի երեսփ. բնութարարութեան վաւերացումը ընդհ. ժողովոյ մէջ մերժուած օրն էր, երբ Օտեան էֆ. ժողովէն դուրս ելնելով զմեզ Մատենադարանը տեսնելուն՝ հարցուց մեկ թէ՛ իրօք մեք զԸնդհ. ժողովն ջրանկրաց ժողով կոչեր էինք, իսկ մենք առանց բացատրութիւն տալու այս մասին, հարցինք ն. վսեմութեան թէ, «իմ այդպիսի խօսք մ'ըսած կամ չըսած ըլլալուս վրայ չհամոզուած և



դիտցած, խղճերնիդ ինչպէ՞ս  
տարաւ, էքսէլանս, վաւերաց-  
ման մերժումը քուէտարկել:

—Էս քուէ չտուի, ձեռն-  
պահներէն էի, պատասխանեց  
Օտեան էֆ. և օձիքն ազատեց:

Բայց միթէ ատու իր պար-  
տականութիւնը կատարած ե-  
ղաւ: —Ո՛չ, այլ եթէ ինքն ալ  
միևնոյն թերթը կարդացած ըլ-  
լար, և կամ փափաքեալին բու-  
լոր ըսածներուն օձիքն իրեն  
Խոյ ըրած չըլլար, անմիջապէս  
պիտի առարկէր ըսելով թէ, —  
ս'չ ո՛չ, փափաքեալն էֆ. այդպէս  
մէկ կամ երկու մարդու բերա-  
նացի վկայութեամբ, և առանց  
գրուածին բնագիրն հոս բեր-  
ուելու, գաւառի մը երեսփո-  
ղնորութիւնը չմերժուիր, այլ  
նախ այդ գրուածքին բնագիրը  
պէտք է հոս ներկայացնել իր  
բուն բառերովը, որպէս զի ժո-  
ղովն ալ ինքը տեսնէ, համոզ-  
ուի և ըստ այնմ իր որոշումը  
տայ:

Այս էր պարկեշտ և ան-  
կեղծ երեսփոխանի մը պարտ-  
քը նոյն պարագային մէջ: Ը-  
րա՞ւ զայդ Օտեան էֆ. —Ո՛չ, —  
Ուրեմն պարտազանց գտնուե-  
ցաւ: —Ինչո՞ւ: —Լրագիր չկար-  
գալուն համար:

Թերևս Օտեան էֆ. չքուէ,  
բայց մտքէն անցնէ թէ մեր  
ազգին մէջ իւր ընթերցմանը  
արժանի թերթ չկայ: —Լաւ,  
թող հրամայէ Օտեան էֆ. ինքը  
գրագէտ մարդ, հմուտ մարդ,  
կարող և ձեռնհաս մարդ, հա-  
րուտ մարդ, ազդեցութեան  
տէր մարդ, և ինչ մարդ, թող  
հրամայէ իր պաշտպանութեանը  
և ներշնչմանը ներքև ազգ-թերթ  
մը հիմնէ և հրատարակէ, ազ-  
գին ալ ցոյց տալու համար թէ  
«կարդալու և թերթ ըսելու ար-  
ժանի լրագիրն ահա այսպէս  
կըլլայ»: Թող հրամայէ, իսկ եթէ  
չկրնար ընել զայդ, (զի չեմք  
կրնար ըսել ալ թէ չա՞նք, վա-  
սքն զի այն ատեն իր ազգասի-  
րութիւնը կասկածի տակ ձգած  
պիտի ըլլաինք, քանի որ ինքն  
այդպիսի թերթ մը հրատարա-  
կելովը մեծ բարեք մ'ըրած պի-  
տի ըլլար ազգին,) եթէ չկրնար  
ընել զայդ, պէտք է ուրեմն ըն-  
դունի որ մեր ազգին մէջ այժ-  
մու գտնուած թերթերն, ինչ  
որ ալ լինին, մեր ազգին հա-  
մար ամենէն կարևոր և ընթերց-  
ման արժանի թերթերը կ'հա-  
մարուին, և չեմք կարծեր որ  
Օտեան էֆ. այն աստիճան մար-  
դատեցութիւն ունենայ, որ 500  
600, 800 կամ 1000 ընթերցող  
ունեցող թերթ մը իր ընթերց-  
մանը անարժան գատնելով, ինք-  
զինքին քով այդ 800 կամ 1000  
ընթերցողներն գատնուի կող-  
մանէ շատ ստորին վիճակի մէջ

ցոյց տալ ուզած ըլլայ իր այդ-  
ականարկութեամբ:

Եթէ յիշեալ լրագրաց տե-  
սութեան կամ մտածման եղա-  
նակն իրեն ախորժեկի չգայուն  
համար է որ չկարդար զանոնք,  
այս մասին զՍ. Պատրիարքը օ-  
րինակ ցոյց կ'տամք իրեն, որ  
ինքը լրագրաց շատին հետ կամ  
լրագրաց շատն իրեն հետ հա-  
կակարծիք գտնուելովն հան-  
դերձ, Ն. Սրբազնութիւնը դար-  
ձեալ թէ՛ բաժանորդ կ'գրուի,  
թէ կ'վճարէ և թէ առանց մէկ  
թիւը փախցնելու կ'կարդայ,  
թէ պէտ ինքը համակարծիք չէ,  
ինչպէս բոլորք և շատ անգամ  
ալ կ'սրտնեղի, բայց վերջապէս  
թէ՛ կ'առնու և թէ կ'կարդայ,  
կարդալու ժամանակ ալ չունե-  
նայ նէ ինքը՝ ուրիշին կարդա-  
ցընել կ'տայ, որպէս զի չստիպ-  
ուի ըսել Օտեան էֆ. պէս թէ՛  
ինքը այդ թերթը չկարդար, և  
մեք մեծապէս կ'ցախնք որ Օ-  
տեան էֆ. Ս. Պատրիարքին սի-  
րելին և մտերիմն գտնուելովն  
հանդերձ, վեհանախութեան և  
մեծագիտութեան կողմանէ՛ այս-  
քան շատ ետ ու վար կ'գտնուի  
ինքը Ն. Սրբազնութեանէն:

Բայց Օտեան էֆ. պիտի ը-  
նէ անշուշտ թէ ինքը ազգ. բո-  
լոր թերթերը միանգամայն չը  
կարդար, այլ ունի իրեն յա-  
տուկ ազգ. թերթ մը՝ որ զայն  
մինակ կ'կարդայ:

Գիտեմք զայդ, իսկ այդ  
թերթը՝ ազգ. հասարակաց վի-  
ճակը կամ կարծիքը չներկայա-  
ցընել, և մինակ զայդ կարդա-  
լով միւս թերթերն կարդացած  
չհամարուիր, միւս թերթերուն  
գրածին վրայ գաղափար մը չը  
կրնար ունենալ, իսկ ամեն  
թերթ ալ Օտեան էֆ. ի ընթերց-  
ման արժանանալու համար ալ  
չողորթութ չեն կրնար ըլլալ: Ա-  
մեն թերթ իրեն յատուկ հան-  
գամանքն (քառաթէն) ունի,  
զորոց ամենք ալ յարգելու եւ  
կարգալու պարտաւոր է ազգ.  
երեսփոխան եղող անձ մը:

Մեք այս սողերը կ'գրեմք,  
ոչ թէ Օտեան էֆ.էն կարդաց-  
ուելու համար, զի նորա կար-  
դալէն կամ չկարդալէն բնաւ  
կախումն չունի մեր կեանքը կամ  
գոյութիւնը, այլ ցոյց տալ կու-  
ղեմք թէ՛ այն երեսփոխանէն՝  
որ հրապարակաւ «ես այդ թեր-  
թերն չեմ կարդար» կըսէ, ազ-  
գին համար այնքան մեծ բա-  
րեք կամ օգուտ մը պէտք չէ  
սպասել, զի նա դեռ իր ազգ.  
երեսփոխանական պարտակա-  
նութիւնն ալ ճանչելէ բաւա-  
կան հեռի կ'գտնուի:

Իսկիւտար Ս. Խաչ եկեղե-  
ցին այս կիր, որ պատահած  
դէպքին վրայօք, զոր երէկ հա-

րեանցի մը յիշեցինք, հետե-  
եալ նամակը զրկուած է մեղ-  
ի հրատարակութիւն:

Իսկիւտար 20 օգոստ. 79  
Մեծայարգ. Խմբագիր

Երէկ առաւօտեան թաղիս  
Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ տեղի  
ունեցած դէպքը ճշիւ Զեղ  
տեղեկագրել արժան կ'համա-  
րիմք, որպէս զի զանազան տա-  
րածաշուկութիւններ չձագին հա-  
սարակութեան մէջ, Յայտնի է  
որ մեր քարոզիչ խնդիրը մինչև  
ցարդ բարձի թողի մնացած է  
և մեծագոյն մաս ժողովրդեան  
կրօն. ժողովոյ խաղաղիկ եղած  
է՛ առարկուելով թէ ճերմակ-  
եան ամբաստանեալ է՝ մինչև  
որ իւր դատը չաւարտի եկեղե-  
ցի մտնելու իրաւունք պիտի  
չունենայ, և որովհետև նորա  
ամբաստանողն ալ քահանայից  
դասն է՝ վասն որոյ ժողովուր-  
դը ասոնց դէմ զայրացած իւր  
արդար իրաւունքը գործադրե-  
լու համար երէկ առաւօտ կը  
դիմէ եկեղեցին և զքահանայս  
զատ զատ պահարան կտնջելով  
կ'պատուիրէ անոնց որ անմիջա-  
պէս եկեղեցիէն դուրս ելնեն՝  
առանց գժտութիւն ծագելու  
ժողովրդեան մէջ, ասոր վրայ  
ոմանք դիմադրեցին և ոմանք  
դժկամակեցան թէև, սակայն  
հուսկ ուրեմն «ըստ ամենազօ-  
րի» աղօթքն աւարտելէն ետ-  
քը ամենքն ալ դուրս ելան, և  
ժողովուրդը տաճարին գունդը  
գոցելով՝ բանալիները լուսարա-  
բապետ Տ. Գարեգինի յանձ-  
նեց, յետոյ ժողովուրդը թաղ-  
խորհրդարանը դիմելով իր այս  
բաղձանքը թաղ. խորհրդոյ  
յայտնեց և վերջապէս որոշ-  
ուեցաւ որ թաղին քահանայնե-  
րէն բնաւ մէկը իրաւունք չու-  
նենայ սրբազան պաշտամունք  
կատարելու, և 2 պահուստ  
քահանայ բերուին եկեղեցական  
պաշտօն վարելու համար, մին-  
չև որ միւս քահանայից և ճեր-  
մակեան Գեր. Հօր դատը ար-  
դարապէս տեսնուի Այն քա-  
հանայն որ ժողովրդին ստորագ-  
րութեամբ Աստուծոյ պաշտօ-  
նեայն ըլլալու արժանացած է,  
այսօր կ'յանդգնի մինչև ան-  
գամ հրապարակաւ պուռլ թէ  
քանի՞ կ'առնես ժողովրդին  
հանրագրութիւնը, ես անով...  
ըս կ'սրբեմ ես ալ անոր մէջ կը  
... եմ, Ահա այսպիսի ընտիր  
քահանայներէ առաջնորդեալ  
հայ ժողովուրդը որչափ երջա-  
նիկ կրնայ ըլլալ, Դուք ինքեին  
կրնաք մակաբերել:

Այս եղելութիւնը Ս. Պատ-  
րիարքն իմանալով հրաման ը-  
րեր է որ քահանայներէն միայն  
2ը գոնէ վար գրուին սրան-  
գուստ քահանայի տեղ և միւս  
ները պաշտօնազուրկ ըլլան առ-

այժմ: Ամեն. Ս. Պատրիարքի այն  
հրամանը յարգելու համար բո-  
լոր ժողովրդեան միաձայն հա-  
ւանութեամբ Տ. Գարեգին և Տ.  
Աթանաս քահանայներն ընդու-  
նուեցան՝ մինչդեռ առաւօտեան  
որոշման համեմատ Տ. Գարեգինը  
ոչ թէ հոգեւոր պաշտօն վարե-  
լու այլ միայն անօթներուն պահա-  
պանութեանը համար վար դըր-  
ուեցաւ:

Գոհութեամբ կ'իմանամք թէ  
Իսկիւտարցի բանտարկեալ գը-  
գակաւոր երիտասարդք, դա-  
տաստանի ելնելով եղեռնական  
յանցանք մը չկրնալով ստուգ-  
ուիլ և հաստատուիլ երէկուան  
օրը ամենքն ալ ազատ արձակ-  
ուեր են:

Բանտարկելոց հարցուցեր  
է դատարանը թէ՛ իրենք ո-  
րուն խորհրդովը այդ գդակը  
գրած էին, մասնաւոր ֆօմի-  
թէի մը անդամներն էին, և  
կամ թէ եկեղեցւոց մէջ այդ-  
պիսի քարոզներ տրուե՞ր էին  
որ գլուխին այս տեսակ գդակ  
դնեն, և ինչ Բանտարկեալք ալ  
պատասխաներ են թէ՛ այդ գը-  
գակը դնելուն մէջ՝ անանկ  
կտրծուածին պէս գողտիկ և  
մեղապարտ դիտում մը չկենա-  
լով, ընդհակառակն իրենք տե-  
ղուկան օսմ: վաճառք կամ ձե-  
ռակերտ մը նպատաւորելու  
նպատակաւ է որ այդ գդակին  
գործածութիւնը ընդունելէին,  
և թէ ասկէ ետքն ալ այդ գը-  
գակին գործածութիւնն իրենց  
արգիլող պատճառ մը չէին տես-  
ներ:

Դատարանը կասկածուած  
յանցանք մը չկրնալով գտնել  
վրանին սոցա տուած այս պա-  
տասխաններէն, երաշխաւորին  
առնելով արձակել կ'հրամայէ:

Մշեցի տիրացու Յակոբն սա-  
կայն թող չէ տրուել, կըսեն:

—Հայէպի նորընտիր կայս-  
րօմիսէր Սաիտ բաշա՝ անգղիա-  
ցի Պրիսքօ գնդապետին հետ  
միատեղ Հայէպ հասեր է:

—Լսնտրայէն երէկ հասած  
հեռագիր մը կ'ձեռնուցանէ թէ,  
փոքր Ասիոյ մէջ Պէյքըր բաշա-  
յի՛ քաղաքային և զինուորական  
բարձր պաշտօն մը յանձնուիլն  
ապահովուած է: Սակայն յայտ-  
նի չէ թէ՛ նա անպատճառ  
կարնոյ կուսակալ պիտի անուա-  
նի, բայց ինչ որ ալ լինի՛ Հա-  
յաստանի բարենորոգմանց հա-  
մար օսմ: և եւրոպացի անդամ-  
ներէ կազմուելիք խառն յանձ-  
նաժողովոյ նախագահութիւնը  
պիտի վարէ:

—Կարինէն մեզ գրուած  
նամակ մ'ալ կըսէ թէ տեղւոյն  
Անդղիոյ հիւպատոսը և ազգ-  
քննիչ Տ. վահան վարդապետ  
միշտ ի միախի կ'տեսնուին հա-



յատարանի բարենորոգմանը գործադրութեանը վրայ, կը կարծուի թէ անգղ. հիւպատոսը Սըր Լէյթօնի, և վաճան վարդապետ ալ ազգ. Պատրիարքարանի գրեթե թէ, առանց եւրոպ. խառն յանձնաժողով մը կաղմելու, անկարելի է ունէ իրական բարեօրոգմանը հիմ մը դնելու:

Միևնոյն նամակը կ'ծածու. քանի նա ևս թէ, կայս. Բոմբ. սէրք, որք ցարդ ունէ բան մնալ չեն ըրած կարնոյ դաւառին մէջ, և ոչ իսկ փղեցուց հողմ. յին դատերն տեսեր, և ոչ ձերբակալեալ փերտ պէյերն պատժեր են, զորոյ մ'ելեր է թէ անյայտ վան պիտի երթան, նմանապէս Դերջանի մէջ 18 Հայ բանտարկուեր են՝ տաճիկ աղջիկ մը առեւանգելով կորս վախցնող Հայ երիտասարդին վախուստը դիւրացուցած ըլլալու ամբաստանութեամբ, իսկ Կարնոյ Առաջնորդն և անգղ. հիւպատոսը՝ կուսակալին դիտողութիւններ քննելով, ասոր վրայ 18 հոգին արձակուեր և մինակ երեքը վարդապետ են:

— Կիմանած թէ Արարատեան ընկ. յառաջիկայ շաբթուան կիր. գիշերը Պէոյիւք տերէ Երամեան կարապետ պէյին պարտէզը դաշտային պարահանդէս մը պիտի տայ, որոյ կարգադրութեանը համար յատուկ մասնախումբ մը կադմուեր է այժմէն Օտեան Գ. էֆ. ի նախագահութեամբ:

— Կ'լսեմք թէ Գեր. Հասունին արուած Պատրիարքական վերջին Պէրաթին պարունակած պայմաններն, բէվէրսուրուսի կոնգակին տրամադրութեանցը հետ բազդատելով քննադատող տետրակ մը տպագրուելու վերայ է այսօրերս, կարծեօք Գեր. Էնֆիէճեան Գրիգոր վարդապետին հեղինակութեամբը:

**ՀՆՈՍՊՐԱՆՈՒՐԳ**

Լոնտրա 1 սպտմ.

Լոնտրա հասնող հեռագիր մը կ'ծանուցանէ թէ հելլ. սահմանադիրոց յարգարման Յանձնաժողովոյ երէկուան (կիր. առուր) նիստին մէջ, որ ի կ. Պոլիս, օսմ. անգամք հաւաներ են Պէրլինի ֆոնկրէին յ. Գ. ատենագրութիւնն իրեն հիմն բունել կատարուելիք անակցութեանց, առ այդ իրենց վերապահեալ կարևոր դիտողութիւններ ունենալին յայտնելով հանգերձ:

Ս. Բէթէրսուրկէն կ'հեռագրեն Մօրնիկ-Ռոսթր թէ՛ Զ. ըր վերջին առթիւ մը յայտնել է որ Դերմանիոյ վիլհէլմ կայսեր նկատմամբ իւր ունեցած բարեկամութիւնը միևնոյնն է՝ վիլհէլմայէն ալ թալիզի քա.

շուած հեռագիր մը կ'ծածուցանէ թէ, Անտրաշի կոմսն յայտնել է թէ՛ ինքը շատ գոհ է կաթիլէյի տեսակցութենէն, ուստի և իւր գործէ քաշուելը 15 աւուր չափ ետ թողեր է, որպէս զի ինքն անձամբ կարգադրէ լինցնէ Չէթինէի, Բլա. վայի և Արապ-Թապեայի սահմանադրաց ինդիւստրիէն:

Սօֆիա 1 սպտմ.  
Հաս վերադարձող տաճիկ գաղթականք միշտ Պուլկար օստիկանութիւնն կ'կեղեքուին: Ոստիկանութիւնը ոչ միայն զէնքերն կ'առնու ձեռքերն էն, ալ և սովորաբար առօրեայ պիտոյից համար գործածելիք փոքրը դանակներն և զմելիներն և այլ նիւթերն, զորս պուլկարայ կ'բաժնէ: Տաճիկ կ'կենտրոն խայտառակ խոյարկութեանց ենթարկուեցան, Ըստ հրահանգի Սըր Լէյթօնի, Սօֆիայի անգղ. հիւպատոս Պ. Բէլլիքէյի այս մասին խիստ դիտողութիւններ բրու պուլկարական իշխանութեանց:

**Այս օրու հասած**

Բարիկ 1. — Պորտուգալի մէջ Պ. Պլանքի բնորութիւնը համեմատական պիտի մնայ:

Լոնտրա 1. — Անգղ. կառավարութիւնը Պիրմանիոյ անգղ. դեսպանք ետ կ'առնէ:

Տէյի-Նիուզ կ'ծանուցանէ թէ, Ասիոյ առևտրական արշաւող բանակին հրամանատար Լազա. րէֆ զորապետը մեռեր է:

Տէյի-Թէյկրաֆ ալ կ'ծանուցանէ թէ ֆոքր-Ասիոյ մէջ տաճիկ-առևտրական նոր սահմանազրու զորոյն բանակցութիւնք սկսելու են:

Չէթինի 1. — Գորտագրի իշխանը երէկ վիլհէլմ մեկնեցաւ, որոյ այս ճանրորդութիւնը Գորտագրի նոր սահմանացը ինդրոյն պատճառաւ ըլլալ կը կարծուի:

Սօֆիա 1. — Աղէկաւոր իշխանը երէկ սրպիական դեսպանը իր ներկայութեան ընդունեց:

**ԴՐԱՄԱԿԱՆ**

Այս ամառու բացուեցաւ	12-22
Բումէլի	44-75
Թղթադրամ	790-00
Պղինձ	490-00

**ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ**

Մարգարէին խրատի Շէրիֆին տօնին պատճառաւ, այսօր պաշտօնաբաններն գոց պիտի մնան:

— Երէկ Ա. նախարարը Պանքանիւրու տնօրէններն և քանի մ'ալ երեւելի սեղանաւորք Բ. Դուռք կանչելով, գանձուց պաշտօնէին ներկայութեամբը հետեւին բանակցութեան մտեր է 500-000 ոսկոյ փոխառութեան մը համար, որն որ բանակին և արիշ մէկ քանի անմիջական պիտոյից պիտի գործածուի, իսկ տրուելիք վերջնական որոշումը վաղուան մնացեր է:

— Կայս. Ա. զորաբանակին Միւլլեր Տէլիք բաշտ երէկ Տա. վաւ բաշտի զորանոցն երթալով զորաց վաշտերն աչքէ անցուցեր է:

— Պ. Հիրշի փոխառութեան տաշարկութիւնք քան ներու պաշտօնով Միւլլերի էֆ. ի նախագահութեամբը կազմուած յանձնախումբին անգամ ընտրք. ւած են Չամիշ Յոլի, էֆ. Էտիպէֆ. Օսեան Գ. էֆ. և Նազիֆէֆ:

— Օսմ. Պանքան և Պալթա. ճի բնկ. առաջարկեր են Իրան Երախտի բէթին իրենք վարձու առնել, 5 ատրիէն ետքը հասուլին Օ/Օին 40ը տէրութեան տարու պայմանաւ:

— Երամեան Արթահամ բաշային եղբայրուէն վաղը մայրաքաղաք հասնելը կապտուի:

— Ռուս դեսպանատան Ա. թարգման Պ. Օնու, երէկ հասած կայս. հեռագրաւ մը դեսպանական խորհրդական անուանուեր է Պ. Նէլիտօֆի տեղի:

— Ռուսիկանութիւնը երէկ երկու Սուլթան Պայաղիա կողմերը կ'նշ կերպարանք մտած այլ մարդ մը գտնելով ձերբակալեր է:

— Գողթուն վրայ հսկելու համար զապթիէի կարօտ էինք հիմայ ալ զապթիէներուն ընթացքին վրայ հսկելու համար ուրիշներու կ'կարօտիմք կոր:

Այս կիր. օր գապթիէ մը զալթիոյ կամիլին զուխր 8-10 տարեկան յոյն աղի մը ձեռք պարկի մը մէջ զոյգ մը պթիէն տեսնելով զոր տղան Սուրբեռէն հետք բերած է եղեր, կառնէ զայն ձեռքէն որպէս թէ գողցուած է ըսելով, և տղան վոյվոտայի պահականոցը տանելու պատրուակաւ առջիւք ձեռքած գացած ատեն, Պարաքէօ. յի զլուխը տղան կ'թողու և ինքը պարկով 4օշիկներն առնելով կանհետանար:

Ֆիլիպէէն հեռու եւրկրեն մեզ օգտ. 17 թուականաւ:

... Խմբագիր Տէր:

Թէ ի Պոլիս և թէ ի գաւառքս, ս'ըր ճանապարհորդեմ, շարունակ ձեր պատուական Լքրագրոյն պիւղ. ընթերցողներէն մին լինելով խնդրեմ ակնածութեամբ բարեհաճեալ անկիւնիկ մը շնորհել յետագայ դիտողութեանցս՝ յուղղութիւն երկու վերապահաց՝ որ յակամայս սղբրգած են ձեր յլս. Յ) թերթին մէջ, Աղբիւնու պոլոյ նորընտր թարգմանութեան նախագահ Մեծ. Սեդրաք էֆ. Պոյտճեանի նկատմամբ, զոր շինթած էք Սագաեան կարապետ էֆ. ի հետ գոր վերոյիշուալ Սեդրաք էֆ. ն վերջերս թարգմանական շինութեանց համար իր գալթիա ընդունեցաւ, հետ առ այս կարևոր քննութիւններէ:

Մեծ. Սեդրաք էֆ. բնիկ Տրապիզոնցի է և երկրին ազնւազարմ գերգաւտաններէն մին շառաւիղ, անքնդ հատ ինն տարի ուսմունք քրած ի Բարիկ կեդրոնական վարժարանին ուսանողներէն մին, վաւերացեալ ճարտարագետ, 1870ի պատեքրագիրն յաջողող զաղղիական բնտանի կուլներէն և տերումներէն ետքը մեկնելով ի Գաղղիոյ, մէկ ասարի մնաց ի Հոնովուս որս յիշատակարանաց և

զլուխ գործոց յախտենակամ քաղաքին՝ յազուրգ տարով իւր խորագնէին և անդուսպ մտաց և գեղազարդելու իւր ճաշակը: Վերադառնալով ի կ. Պոլիս՝ մեկմեցաւ ի Պոնտոս ժամանակ մը անցնելու իւր ընտանեաց մօտ, ուստի շուտով հասարակաց շինութեանց վերատեսչութեան կոչուեցաւ՝ ֆոքր Ասիոյ ալ և այլ գաւառներուն մէջ հետազոտութեանց և շինութեանց համար մեկնելու. իւր պաշտօնն յամենայնի անտգրուս եղանակաւ կատարելով՝ և ամենայն յաջողակութեամբ, ի մեծ գոհունակութիւն վերատեսչու թեան, ի գլուխ հանելով վերադարձաւ ի կ. Պոլիս, իւր ոչխատանաց հաւատարմութեան, գործունէութեան և արտայայտած հմտութեանց դոյզն փոխարէն բնդունելով մի պատուանշան ի խրախոյս:

Աղբիւնու պոլոյ ի Ռուսաց գրաւեալ ժամանակ, Բեուֆ բաշայի հետ հոն գնաց, ուր մնացին երկուքն ալ առևտոց մեկնելէն ետքը, Ն. վսեմութիւնն Բեուֆ բաշա, որոյ հազուագրուս յատուկութիւնք և խոհուն կառավարչութիւնք արգէն ամենուն ուշադրութիւնք գրուած է, քաջ գիտէ իւր պաշտօնեայները ընտրել, կարող, մտացի, գործունեայ և հարեհառու անձինք միայն կը վայելին Ն. վսեմութեան վստահութիւնը, Ն. վսեմութիւնը յատուկ փոյթ մ'ունենալով քաղաքապետական գործոց անոնց բարեկարգութեան պաշտօնը յանձնեց Մեծ. Սեդրաք էֆ. Պոյաճեանի, որ քրաւ ինչ որ կարելի էր բնել նախկին ժողովոյն ժամանակ, Ն. վսեմութեան յաւ գնահատելով Սեդրաք էֆ. ի մեծ տաղանդը, գիտութիւնն, բազմադիմ յատուկութիւնը և իւր կարողութիւնը գայն փութով քաղաքապետութեան նախագահ անուանեց, Ն. վսեմութեան վստահութիւնը նրն ընաւ ապարդին չիւաւ, իսկոյն Սեդրաք էֆ. առանց վայրկեան կորուսանելու, սկսաւ գործել, ջրմուղները մարքել նորոգել տուաւ, բոլոր պողոտայից յատակները վերստին նորոգել սկսաւ և արդէն 7000 քառակուսի կանգ ունէն աւելի տեղ ամենագեղեցիկ և հաստատուն կերպով աւարտած է. քաղքին վից շրջանակներուն մէջ մտքութեան և ուսողման պաշտօններ և կառուղեաց վերոյ պահակներ հաստատեց, չրջարեւութեան կառուց գին որոշեց և անոնց համար տպեալ կանոնադրեր նրուեց. լուսաւորութեան յապտէրներն անհամեմատ կերպով աւելցուց բոլոր քաղաքին մէջ, պաշտօնատեղւոյն գրաւեալներն բոլորովին բարեկարգեց և ամենայնիւ ևւրապական գրութեան մաքուց, ու թողապետութեան սովորական եկամտից վրայ տարեկան առաւել քան զհաղար ոսկի աւելցուց. մարքութեան և բարեկարգութեան անհամեմատ տարբերութիւն կայ սոյն քաղաքին Ռուսաց թողած և հիւմակուտն վիճակին մէջ:

Գլխաւորութիւնն ունի նաև



հասարակաց պարտեզներ, թան. գարան մը, մի գործնական վար. ժարան երկրագործութեան և մի գործնական վարժարան ճար. տարութեանց հաստատելը ընդ հուշ. նմանապէս մի յատուկ վաճառանոց հաստատելը ընդ ե. ղինաց և ձկանց համար, և մե. կուսացնել քաղաքէն սպանդա. նոցներն և ամէն օրն զգալա. պէս ապականող հաստատու. թիւներն: Միով բանիւ, ինչ որ տեսայ Ագրիանուպոլսէն ան. ցնելով հոս դալուս, Մեծ Սեդ. րաք էֆն անձանձիր կաշխատի քաղաքի մը մէջ հանգիստ և ա. պահով կեանք վարելու համար ամեն միջոցներն և բարեկար. գուծիւններն ի գործ ածելու յամենայն որ իւր պաշտօնին կ'վերաբերի. մաղթեմք, որ այս մեծ անձը՝ որ կատարեալ ուս. մամբ, խորին գիտութեամբ և ամենայն բարեմասնութեամբ զարգարեալ է՝ յարատեւ իւր պաշտօնին մէջ. ժիր կեանքը ու շարունակ աշխատութիւնը՝ իւր միակ հաճոյքն է, և իւր երկ. րին և տէրութեան յառաջդի. մութիւնն ու քաղաքակրթու. թիւնն՝ իւր միակ նպատակն: Մնամ և ին.

Մ. Տեւոթեան

ՀՐԱՒԷՐ

Առանդամս Ազգանուէր ընկ. Հայուհեաց  
Ընկերութեան ընդհ. ժո. ղովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ, օգոստ. 24, Մէլամիլէ թաղի ազգային վարժարանին թատրոնը ի ժամ 6:

Մնամք յարգանք  
Դիւան ընդհ. ժողովոյ  
Ատենադպիր Ատենապետ  
Զապէլ Խանձեան Եշխաբէի Սեղէնեան.

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընթերցումն նախորդ նրս. տի ատենագրութեան, 2. Ըն. թերցումն դիւանական թղթակ. ցութեանց, 3. Էռամեսայ հա. մարատուութիւն գործադիր ժո. ղովոյ, 4. Վաւերացումն ընտ. րութեան պաշտօնէից գործ. մասնաժողովոյ Գառը գիւղի և ներքին կանոնադրութեան նո. րին, 5. Վաւերացումն ներքին կանոնադրութեան բնդհ. ժողո. վոյ, 6. Հրատարումն Բ. Ատե. նապետի բնդհ. ժողովոյ:

ՄԵԶՊՈՒԿԵԱՆ

ԳԻՇԵՐՈՒԿ ՎԱՐՃԱՐԱՆ  
ԱՂԶԿԱՆՑ

Բազմադիւն Մկրտիչ էֆ. Մեղաւորեան, իւր ի Գուճգա. րու հիմնած և շարունակած արու աշակերտաց վարժարանէն զատ, այս անգամ ալ Աղջկանց դիշերթիկ վարժարան մը բա. նալու ձեռնարկած է, իւսկիւ. տար ի ճատիէի բարձանց վրայ օգտուէտ ընդարձակ տուն մը վարձած ըլլալով լայնարձակ պարտիզաւ:

Յիշեալ վարժարանը պիտի բացուի սոյամ: ամսոյ մէջ. Տօր. Մեղաւորեան վարժարանին րր. ժիլկի ըլլալու պաշտօնն յանձն առած է, 30 սակի տարեկան

Թոշակաւ կընդունին աշակեր. տուհիք, ուրիշ մանրամասն պայմաններու վրայօք ծնողք կրնան դիմել Գուճգարու Մալլ հիկեղեցոյ դէմը Մեղաւորեան դպրոցը ամեն օր մինչև կէս օր:

ՀԱՄԱԶԻԵԱՑ ՎԱՐՃԱՐԱՆ  
ՕՐԻՈՐԴԱՑ

Ի Բերա Լալէ փողոց թիւ 11

Տեսչութիւնն կ'փութայ յայ. տարարել թէ վարժարանը պի. տի բացուի առաջիկայ Սեպտե. մանոյ 3ին, երկուշաբթի առա. ւօտ:

Ով որ կուղէ տեսուչներուն հետ խօսակցիլ կրնայ գտնալ ի վարժարանին, ամեն առաւօտ սկսեալ օգոստ. ամսոյ 23էն, ժամ 2էն ց5:

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

Պէրպէրեան վարժարանի Տը. նօրէնութիւնն կ'ձանուցանէ որ վարժարանն փոխադրուած է Մէլամիլէ ֆիւրքճիւպաշի ըն. դարձակ տունը, Դպրոցը բաց. ուած է օգոստ. 20 երկուշաբթի, իսկ դասերն պիտի սկսին օգո. 27ին, նոր աշակերտ տալ փա. փաքող ծնողք սոյն միջոցին մէջ կ'հրաւիրուին տեսակցիլ Տնօրէ. նութեան հետ վարժարանին մէջ:

ԱՌԱՋՆՈՐԴ  
ԽՕՍԱԿՅՈՒԹԵԱՆ

ԱՆՆԱԿԵՐԷՆ ԱԵՁՈՒԻ  
Աշխատատեղաց  
Մ. Պալատարեան Հիւանդանոց  
1879

Անգլիերէն լեզուին դիւրաւ ըն. տելանալու և քիչ ատենի մէջ խօսիլ սորվելու համար յարմարագոյն և մէկ հատիկ գործի մը կրնար համարուիլ այս նոր գիրքը որ 240 երեսէ բազ. կազեալ է և կ'պարունակէ հետեւ. եալները:

Մասն Ա. Քերականական կա. նոններ-Մասն Բ. Զրուցատրութիւնն —Մասն Գ. Անգլիերէնի յատուկ ո. ճեր-Մասն Դ. Համառօտ նամա. րանի-Մասն Ե. Համառօտ Բառա. կան Հայերէնէ յԱնգլիարէն-Մասն Զ. Համառօտ Բառարան Անգլիերէնէ ի Հայերէն:

Արամեան տպարանէն ի յոյս ըն. ծայրուած այս գործը՝ մաքուր տպադ. րութեամբ և անգլիական կաղնով գեղեցիկ կերպիւ պատրաստուած՝ կը ծախուի ամեն գրավաճառաց խա. նութները ի զին երկու ֆրանք:

ԱՂԻ

Մէրճաճը իմամ Ալի խանի վե. րի յարկը թիւ 20 սենեկի մէջ ամեն օր Տաճկերէն և Յրանսերէն լեզ. ուաց ինչպէս նաև Թուրքիտութեան և Տօմարակայութեան զաստիօսու. թիւներ կ'լինին որոշեալ ժամերու մէջ: Եւսն սենեակը նաև յանձն կանոն պատրաստել տաճկերէն և քրանսերէն լեզուներով ամեն տե. սակ պաշտօնական և ոչ-պաշտօնա. կան գրութիւնք, զոր օրինակ ինդ. բազիր, Բաղ-քազիր, Տեղեկագիր, Կամակ ևլն: Արդոյ ազգայինք յիշ. եալ սենեակը զիմելով կրնան ա. պահով լինիլ թէ՛ զաստիօսութեան և թէ՛ միանգամայն վերոյիշեալ զրու. թեանց վերաբերութեամբ՝ փոյթ և և խնամ, ինչպէս նաև բանաւոր և և գահացուցիլ պայմաններ պիտի զըտ. նեն նոյն տեղը:

Յակոբ Յ. Արեւելեան

ԳՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ  
Ուսումն Հասարակաց Ս. Եկեղեցոյ  
ԳՐԵՑ

Գարեգին Վ. Սրբաւնչեանց  
Երկրորդ տիպ  
Գին 60 բարա արծաթ:

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Բան-Իօսում-Ինան  
Հ. ՄԱՂԱՔԻԱ Վ. ՕՐՄԱՆԵԱՆԵՒ  
Արտասանեալ ի Լսարանի  
կրթասիրաց ընկ. իւսկիւտարու  
Գինն է 3 ղշ. արծաթ դրամ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԳԻՏԵԼԻՔ ՈՒ ՊԱՐՏԻՔ ՏՂՈՑ

Բազմադիւն Մամուրեան էֆ ի աշխատասիրութեամբ Իգմիրի Տէտէ. եան եղբարց տպարանէն ի յոյս ըն. ծայեալ 248 երեսէ բաղկացած պատ. ուական գիրք մնէ, որ կրնայ հեղի. նակին ասկէ առաջ հրատարակած օՆոր ընթերցարանին լրացուցիլ մա. սը համարուիլ և Ծաղ կոյի Բ. Դասի աշակերտաց ծառայելու Սոյն գործը՝ բաց ի ամենակարևոր գիտելիքներէ կ'պարունակէ նաև այնպիսի նիւթեր որք ազգ. մանկուոյն սրտին մէջ ի մատուղ հասակէ հայրենասիրական գրացումներ կը ներշնչեն:

Կը ծախուի Եֆնի շամի Զիլին. կիրէր ճատտէսի, թիւ 2, Ս. Գու. կասեան գրատունը, գին 1 1/2 ֆր:

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ  
ՅՕՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Կը ծախուի Եֆնի շամի Զիլին. կիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Գուկաս. եան գրատունը և ուրիշ գրովաճա. ուաց քով: Գին 1 Ֆրանք:

Հ Ա Մ Ս Ո Ց  
ՄԱՐՄԵ Ա Մ Ա Ր Չ Ո Ւ Թ Ի Ի Ն  
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

Հրատարակել  
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Սոյն կարևոր և օգտակար գըր. քոյկը, որ թէ՛ ի պէտս վարժարանաց և թէ՛ առանձինն ուսանողաց կրնայ միանգամայն ծառայել յստակ բա. ցատրութեամբ, 1300 փայտատիպ պատկերօք ճոխացեալ և 140 երեսէ բաղկացեալ ընտիր դասագիրք մնէ, գինն է կէս արծաթ մմիտ, (չաղդ. բնագրին գինն ըլլալով 3 ու կէս ֆր.) Կ'գտնուի Կ. Պոլսի Սուլթան. Համամ Էսպատ էֆ. խան թիւ 27, Նշան էֆ. Ե. Պէրպէրեանի փորագ. րատունը և բոլոր գրավաճառաց քով:

ՇԱՐԳ  
ՄՈՒՀԱՐԷՊԵՍԻ ՀԻՔԵԱՅԼՍԻ

Հեղինակութիւն  
ՊԱՐՏԱՆ ՊԵՐՅԻ

Բաժանորդք գրուելու ուզողներն զիմելու են Բերայ Թարա-Պաշը փո. ղոց թիւ 22 քաղիւն գործոյս հրա. տարակիչ Միհրան Ս. Գիթապեան էֆ. և Պոլսի Սուլթան-Համամ Է. սատ էֆ խանը փորագրելու Պէրպէր. եան Նշան էֆ. ի:

Իսկ տետր առ տետր զնիլ ու. զողաց համար կ'ծախուի Լիմն-Էսնիւ չրովաճառ ՄՀԻ. Պոլսի աղայի խա. նութը, Բերայ Աղա-Համի ծխափա. ճառ Բահթեան Յովսէփ աղայի 167 թիւ և Թարա պաշը ծխափաճառ Անգրէաս աղայի խանութները:

ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի գեղը բոլորովին բուսեղէններէ բաղադրուած ըլլալով թէ՛ ներսէն և թէ՛ արտէն կը զոր. ծածուի ու բաղաթիւ ցաւեր ու հի. ւանդութիւններ շուտով կը բժշկէ:

Ինչպէս որ վարը յիշուած է:

Ամեն տեսակ փոլի, լստամբ. սի, մէլքի կամ Աղիքներու ցաւեր, ու նաև Թանջը, Գօլթրա և այլ ա. մատուան հիւանդութիւններ ունե. ցողները այս գեղէն խմելու են հե. տեւեալ կերպով: Կէս գաւաթ շուրի մէջ, զիր ապուրի մը զրգալէն աւելի շաքար, վրան լեցուր անուշի զրգալ. մը Փանասէ աղէկ մը խառնէ ու խմէ:

Կոկորդի հիւանդութեանց, և Ուռեցի համար գեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կամ երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ երկու անուշի զրգալ այն բաղադ. րութեանէն խմէ: Յօդացաւի, Բիւմա. թիլգմի, Ոտքի ցաւի, Ստամբուի ու տեսակ տեսակ կանակի ցաւերու հա. մար դուրսէն ֆանասէ քսելով աղէկ մը շփելու է: Այնպիսի ցաւի համար քիչ մը բամպակ ֆանասէի մէջ թաթիլելով ցաւած ակուպին վրայ դնելու է:

Ամեն ատեն երբոր ցաւի մը հա. մար դուրսէն ֆանասէ քսել հարկ կըլլայ, եթէ քիչ մը ալ խմուի աւե. լի շուտ բժշկութիւն կըլլայ:

Մարմնոյ սպրուած կամ ճմլու. ւած տեղերը բժշկելու համար վտան. գը պատահածին պէս ֆանասէն վրան աղէկ մը լեցնելու է: Դտնա. կով ևլն. կարուած վերքերը բժշկե. րու համար՝ արևը շարած շուտով մը վերքը կապելու և կապին վրայէն ֆանասէ լեցնելու է մինչև որ լաւ մը թրջի: Ֆանասէն նաև արեան շրջա. նը կարագացնէ ու բոլոր բնութիւնը կը զօրացնէ:

Սոյս դեղին օգտակարութեանը վրայ երկարօ էն գրել աւելորդ կը համարուի, զործածողները զայն միշտ կը գովեն, ուզողը կրնայ ան. ձամբ փորձել. գինն աժան է: Կը ծախուի Միհրանեան և Ընկերաց Ա. մերիկեան վաճառատունը որ ի Ղա. սթիա կ. Պոլսոյ

Table with 2 columns: Item name and Price. Includes 'Հալութիւն ԲՇ. 20 Օգոստ.', 'Ք.Ն.Ղ. ՊԱՐՏ. ԱՐԺ.', 'Բաց 12.21', 'Ցած գին 12.21', 'Բարձր գին 12.24', 'Գոց 12.22', 'Թղթագրաւ՝ բաց 750.00', 'ցած 750.00', 'բարձր 762.00', 'ժամը 11 755.00'

Table with 2 columns: Item name and Price. Includes 'Փոլի, 63ի ֆր. 006.00', '65ի 069.00', '69ի 072.00', '73ի 062.00', 'Գանձատու 21.25', 'Ստիէթէ Ժէնէրալ 4.06', 'Ստիէթէ Օթօման 3.10', 'Պանք տը Բօնսթ. 5.25', 'Բրէտի Ժէնէրալ 4.02', 'Թրամիլէյ 3.75', 'Բոււմ. կրկաթուղի 44.75'

Table with 2 columns: Item name and Price. Includes 'ՐԵՆՔԱՅԻՔ ԳՐԱՄՈՑ', '(Օ. 100 ու. 1 կուււ)', 'Սնդղ. սակի 109.23', 'Գաղղ. 87.12', 'Բօլ 89.38', 'Բըլլից 51.12', 'Հինդնոց 19.10', 'Մէթալիք 17.10', 'Ճերմակ մէճիա 06.22', 'Պղինձ 480.00'